



Համառոտագիր 25

Հունիս 2013

Պետական Գնումներ

Գնումների բողոքարկման մարմնի ստեղծումը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- [Բողոքարկման և վերանայման համակարգի կարևորությունը](#)
- [Հիմնական ինստիտուցիոնալ մոդելները](#)
- [Մասնագիտացված բողոքարկման մարմնին ներկայացվող հիմնական պահանջները](#)
- [Վարչական բողոքներ պատվիրատուներին](#)
- [Մասնագիտացված բողոքարկման մարմնի կարգավիճակը և անկախությունը](#)
- [Այլ կարևոր գործնական խնդիրներ](#)
- [Հետագա ընթերցանություն](#)

Թույլատրված է տպագրության Կարեն Հիլի կողմից, SIGMA ծրագրի ղեկավար



www.sigmaweb.org

This document has been produced with the financial assistance of the European Union. The views expressed herein can in no way be taken to reflect the official opinion of the European Union, and do not necessarily reflect the views of the OECD and its member countries or of beneficiary countries participating in the SIGMA programme.

Բողոքարկման և վերանայման համակարգի կարևորությունը

Բողոքարկման և վերանայման համակարգի հիմնական նպատակը պետական գնումների օրենսդրության գործնական կիրառման պարտադրումն է՝ ապահովելով, որ վերոնշյալ օրենսդրության խախտումները և պետական պատվիրատուների՝ դիտավորյալ կամ ոչ դիտավորյալ սխալները ուղղվեն: Լավ գործող գնումների բողոքարկման և վերանայման համակարգը բխում է բոլոր շահագրգիռ կողմերի՝ տնտեսվարող սուբյեկտների, պետական պատվիրատուների, ինչպես նաև հասարակության շահերից:

ԵՄ անդամ երկրների պետական գնումների բողոքարկման և վերանայման համակարգերը պետք է ստեղծվեն և զարգացվեն հատուկ պահանջների հիման վրա, որոնք սահմանված են ԵՄ Պետական Գնումների՝ 89/665/ԵՏՀ և 92/13/ԵՏՀ Բողոքարկման Հրահանգներում (փոփոխված՝ ի թիվս այլոց 2007/66/ԵՀ Հրահանգով), Եվրոպական Միության Գործունեության վերաբերյալ Պայմանագրով և Եվրոպական Միության Արդարադատության Դատարանի (ԵՄԱԴ) նախադեպային իրավունքով:

Վերոնշյալ և այլ միջազգային չափանիշների համաձայն՝ նման համակարգը պետք է տուժող հայտատուներին և թեկնածուներին տրամադրի իրավունքների պաշտպանության այնպիսի միջոցներ, որոնք կլինեն.

- Արագ;
- Արդյունավետ;
- Թափանցիկ;
- Ոչ խտրական:

Չնայած ԵՄ Հրահանգները հասցեագրված են ԵՄ անդամ երկրներին, թեկնածու երկրները և ԵՄ որոշ գործընկեր երկրներ ստեղծում են նոր (վստահելի և արդյունավետ) բողոքարկման համակարգեր՝ հիմնված ԵՄ Հրահանգների կողմից խթանվող ընդհանուր սկզբունքների վրա: Մույն համառոտագիրը նպատակ ունի ընդհանուր առմամբ ուղղորդել մասնավորապես այդ երկրներում քաղաքականություն որոշողներին՝ բողոքարկման համակարգի ստեղծման և կիրարկման ընթացքում հաշվի առնվող ամենակարևոր տարրերից մեկի՝ բողոքարկման մարմնի (կամ մարմինների) ստեղծման վերաբերյալ:

Մույն համառոտագիրը սկզբում նկարագրում է ԵՄ-ում հանդիպող հիմնական ինստիտուցիոնալ մոդելները՝ առանց փորձ անելու գնահատել նրանց համապատասխան առավելությունները/թերությունները կամ առանց խորհորդ տալու որևէ հատուկ ինստիտուցիոնալ կառուցվածք: Այնուհետև այն ընդգծում է “մասնագիտացված” մարմնին վերաբերող՝ ԵՄ Հրահանգներով և ԵՄԱԴ-ի նախադեպային իրավունքով նախատեսված պահանջները: Մույն համառոտագրի վերջին բաժինը հիմնականում վերաբերում է լավագույն փորձի որոշ դրույթների, ինչպիսիք են բողոքարկման մարմնի անկախության ապահովման եղանակները և բողոքարկման մարմնի ստեղծման ժամանակ հանդիպող այլ կարևոր խնդիրների լուծման եղանակները:

Հիմնական ինստիտուցիոնալ մոդելները

ԵՄ անդամ երկրներում առկա են բողոքարկման ինստիտուցիոնալ շրջանակի ստեղծման տարբեր մոդելներ և կիրառման տարբեր մոտեցումներ՝ կապված ազգային իրավական ավանդույթների բազմազանության հետ. հետևաբար՝ դժվար է պնդել, թե որ մոդելն է մյուսներից լավը: Քանի որ ԵՄ անդամ երկրներից յուրաքանչյուրն ունի ինստիտուցիոնալ ինքնիշխանություն, յուրաքանչյուրն ազատ է ընտրել իր համար ամենահարմար տարբերակը՝ պետական գնումների պայմանագրերի արդյունավետ վերանայում ապահովելու համար: Անդամ երկրներից չի պահանջվում փոփոխել իրենց ինստիտուցիոնալ կառուցվածքը՝ ԵՄ օրենքի կիրարկման, կիրառման և հարկադրման համար. նրանք կարող են օգտագործել արդեն իսկ գործող ազգային աղբյուրները և մեխանիզմները՝ պայմանով, որ դրանք համապատասխանեն ԵՄ օրենքին: Միևնույն ժամանակ, ոչինչ չի խոչընդոտում անդամ երկրներին՝ ստեղծելու նոր, մասնագիտացված վարչական մարմիններ՝ իրավունքների վերականգման միջոցների տրամադրման իրավասությամբ:

Պայմանով, որ Անդամ երկրները ապահովում են պետական գնումների պայմանագրերի արդյունավետ վերանայումը, նրանք ազատ են իրավունքների վերականգման միջոցների տրամադրման գործառույթը վերապահել ստորև նշված ցանկացած մարմնի.

- **Սովորական դատարաններ;**
- **Մասնագիտացված վարչական մարմիններ;**
- **Երկուսի համակցությունը:**

Բողոքարկման Հրահանգը սահմանում է, որ բողոքները կարող են ներկայացվել “առանձին մարմինների, որոնք պատասխանատու են ընթացակարգի տարբեր ոլորտների համար”: Իրավամբ, անդամ երկրների մեծամասնությունը ընտրել է զանազան բողոքարկման մարմինների համակցության մոդելը, որոնք պատասխանատու են վերանայման տարբեր ոլորտների համար: Օրինակ, որոշ բողոքներ, մասնավորապես, նրանք, որոնք ներառում են վնասի հատուցում, կարող են քննվել միայն սովորական դատարանների կողմից, այնինչ որոշ իրավական համակարգերում մասնագիտացված գնումների բողոքարկման մարմինը կարող է քննել բողոքը՝ առանց վնասի հատուցման վերաբերյալ որոշում կայացնելու, եթե այդպիսին առկա է: Հաճախ պայմանագրի կնքումն այն կետն է, որստեղից նման համակարգում երկու ուղղությունները տարանջատվում են:¹

Ինչ վերաբերում է **սովորական դատարաններին**, Բողոքարկման Հրահանգները չեն պահանջում վերանայումն իրականացնել քաղաքացիական կամ վարչական դատարանների կողմից: Տարբերակներից յուրաքանչյուրը կամ դրանք երկուսն էլ կարող են նախատեսվել՝ յուրաքանչյուր երկրի ընթացակարգային կանոնների համապատասխան:

¹ Մանրանասների համար, տե՛ս Պետական Գնումների Վերանայման և Բողոքարկման համակարգերը Եվրոպական Միությունում (SIGMA փաստաթուղթ No. 41, 2007)

Բելգիայում, Ֆրանսիայում, Իռլանդիայում, Նիդեռլանդներում, Պորտուգալիայում, Շվեդիայում և Միացյալ Թագավորությունում պետական գնումներին վերաբերող որոշումների վերանայումը բացառապես սովորական դատարանների առաջադրանքն է:

Ավելին, առնվազն մեկ Անդամ երկիր հստակ տարանջատում է 2004/18/ԵՀ Հրահանգով և 2004/17/ԵՀ Հրահանգով նախատեսված պայմանագրերը: Որպես նման տարանջատման արդյունք՝ **Բելգիայում** վարչական դատարանները գործ ունեն առաջինը նշված պետական գնումների վեճերի հետ, իսկ քաղաքացիական դատարանները՝ երկրորդը նշված պայմանագրեր ներառող վեճերի հետ:

Այլ Անդամ երկրներում իրավասությունը կախված է համապատասխան պայմանագրի բնույթից (մասնավոր կամ վարչական): **Ֆրանսիան** օրինակ է, որտեղ և՛ քաղաքացիական, և՛ վարչական դատարանները ներգրավված են վերանայման գործընթացում, սակայն տարանջատումն իրականացվում է Բելգիայից տարբերվող եղանակով, քանի որ քաղաքացիական դատարանները վերանայում են միայն մասնավոր կոմունալ կազմակերպությունների գնումների որոշումները:

Զանազան մոդելների միջև էական տարբերությունը վերաբերում է առաջին ատյանի բողոքարկման մարմնի աստիճանին: Առաջին ատյանը որոշ դեպքերում վերաբերում է ամենացածր ատյանի վարչական դատարաններին, իսկ այլ դեպքերում՝ ավելի բարձր աստիճանի իրավասության դատարաններին: Առաջին ատյանի աստիճանը կարող է ազդեցություն ունենալ արժեքի, արագության և կողմերին հասանելի լինելու հանգամանքի վրա: Բարձր աստիճանի դատարանում ընթացակարգերը կարող են լինել ծախսատար, ժամանակատար և հեռու այն տարածաշրջանից, որտեղ իրականացվել է գնումների պայմանագիրը: Այս գործոնները կարող են ետ պահել հայտատուներին բողոք ներկայացնելուց: Ի հակադրություն սրան՝ ցածր աստիճանում ընթացակարգերը կարող են լինել ավելի էժան, ավելի արագ և ավելի մոտ գնման պայմանագրի իրականացման տարածաշրջանին. մյուս կողմից, այս մարմինները կարող են ունենալ փորձի և փորձառության պակաս:

Մասնագիտացված պետական գնումների բողոքարկման մարմին առկա է Անդամ երկրների գրեթե կեսում: Այս մարմինները հաճախ ունեն ոչ-դատական կամ քվադրի-դատական բնույթ (այն է՝ նման են դատարանների ԵՄԳՊ 267 հոդվածի իմաստով) և իրականացնում են առաջին ատյանի բողոքարկման մարմնի գործառույթ: Որոշակի բացառություններով՝ մասնագիտացված բողոքարկման մարմնի որոշումները պարտադիր են, ենթակա են բողոքարկման քաղաքացիական կամ վարչական դատարաններ, որոնք կարող են չեղարկել կամ փոխել որոշումը երկրորդ ատյանում:

Շատ անդամ երկրներում երկրորդ ատյանը վերջին ատյանն է, սակայն մի շարք Անդամ երկրներ ունեն դատական վերանայման երրորդ ատյանը, օրինակ՝ Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Նիդեռլանդները, Սլովակիան, Շվեդիան և Միացյալ Թագավորությունը:

Մի շարք կարևոր առավելությունների առկայությունը թույլ է տալիս առաջարկել գնումների մասնագիտացված բողոքարկման մարմնի ստեղծում, հատկապես՝ թեկնածու և հավանական թեկնածու երկրներում, ինչպես նաև ցանկացած այլ

երկրում, որը հետաքրքրված է արդյունավետ բողոքարկման համակարգի կիրարկմամբ.

- Ընթացակարգը հիմնականում ավելի պարզ և ավելի արագ է, քան սովորական դատարանների դեպքում: Այս հատկանիշներն ապահովում են “արագության” չափորոշիչի ավելի լավ բավարարման պայմաններ, ինչը պետք է լինի բողոքարկման համակարգի առանձնահատկությունը:
- Մասնագիտացված բողոքարկման մարմնի անդամները գործ ունեն բացառապես գնումների գործերի հետ: Որպես արդյունք՝ նրանք հնարավորություն ունեն շատ արագ ձեռք բերել մասնագիտական փորձառություն և ծանոթանալ պայմանագրերի շնորհման ընթացակարգերին և այլ հարակից հարցերին:
- Սովորական դատարանների կողմից բողոքի քննման համար անհրաժեշտ ծախսերը կարող են շատ ավելի բարձր լինել, քան մասնագիտացված բողոքարկման մարմիններում՝ ընթացակարգի երկարատևության և իրավական ներկայացուցչության անհրաժեշտության պատճառով:

Մասնագիտացված բողոքարկման մարմնին ներկայացվող հիմնական պահանջները

Չնայած պետական գնումների մասնագիտացված մարմինները հիմնականում դատական չեն, դրանք կարող են ունենալ նաև դատական բնույթ:

Դատական բնույթ. Եվրոպական Միության Արդարադատության Դատարանի (ԵՄԱԴ) նախադեպային իրավունքը սահմանել է այն հիմնական պահանջները, որոնց հիման վրա իրավունքների պաշտպանության միջոցներ տրամադրող մարմինը պետք է համարվի դատական (կամ քվազի-դատական) բնույթ ունեցող: Դատարանը հաշվի է առել մի շարք գործոններ, ինչպիսիք են այն հանգամանքը, թե արդյոք մարմինը ստեղծվել է օրենքով, արդյոք այն մշտական է, արդյոք նրա իրավասությունը պարտադիր է, արդյոք նրա ընթացակարգը կողմերի միջև է (*inter partes*), արդյոք այն կիրառում է օրենքի գերակայության սկզբունքը և արդյոք այն անկախ է:

- **Մարմինը հիմնադրված է օրենքով:** Շատ ԵՄ երկրներում բողոքարկման մարմնի ստեղծումը սահմանված է պետական գնումների մասին օրենքի (ՊԳՕ) առանձին գլխով: Այս դրույթը չի նշանակում, որ բացառապես ինստիտուցիոնալ ոլորտին վերաբերող հատուկ օրենքի ընդունումը նույնպես լավ լուծում չէ: Իրավական դրույթները պետք է կանոնակարգեն մարմնի գործունեությունն ապահովող զանազան ոլորտներ, ներառյալ՝ բողոքարկման մարմնի իրավասություններին, դրա անդամների նշանակմանը և լիազորությունների դադարեցմանը, բողոքարկման մարմնի անդամներին ներկայացվող որակավորման պահանջներին, շահերի բախմանը վերաբերող դրույթներ, գործերի բաշխման նախասահմանված համակարգը և ընթացակարգային պահանջներ:

Ավստրիան առանձնահատուկ դեպք է: Ավստրիայի Դաշնային Սահմանադրությամբ սահմանված դաշնային համակարգի ներքո տաս տարբեր բողոքարկման մարմիններ քննում են պատվիրատուների դեմ բերված բողոքները: Հետևաբար, ընթացակարգերը, որոնց պետք է հետևել, սահմանված են մի կողմից ինը տարբեր դաշնային պետությունների (Länder) գնումների բողոքարկման օրենքներում՝ տարածաշրջանային կամ համայնքային մակարդակում, իսկ մյուս կողմից՝ դաշնային ՊԳՕ-ում:

- **Մարմինը մշտական է:** Մարմինը ստեղծված չէ *ad hoc* (ժամանակավոր) հիմունքներով: Դրա անդամները մնում են իրենց պաշտոնում սահմանված որոշակի ժամկետով: Այս պահանջը չի բացառում բողոքարկման մարմնում մի քանի պալատների առկայության հնարավորությունը, որոնք կգրադվեն գործերով՝ նախասահմանված բաշխման համակարգին համապատասխան:
- **Բողոքարկման մարմնի իրավասությունը պարտադիր է:** Բողոքարկման մարմնի ընդունած ցանկացած որոշում/վճիռ պետք է լինի կատարման ենթակա: Մասնավորապես, մարմինն ունի իրավասություն.
 - Կիրառել ժամանակավոր միջոց՝ նպատակ ունենալով ուղղել խախտումը կամ կանխել հետագա վնասը, ներառյալ՝ միջոցներ մրցութային ընթացակարգի կամ պատվիրատուի կայացրած ցանկացած որոշման կատարումը կասեցնելու կամ կասեցումը ապահովելու համար;
 - Չեղարկել անօրինական որոշումները կամ ապահովել դրանց չեղարկումը, ներառյալ՝ մրցույթի հրավերից կամ մրցութային փաստաթղթերից խտրական տեխնիկական, տնտեսական կամ ֆինանսական մասնագրերի վերացումը:

Վնասների հատուցման վերաբերյալ որոշում կայացնելու լիազորությունը պարտադիր պայման չէ, և խորհուրդ է տրվում այս լիազորությունը վերապահել ավելի բարձր աստիճանի դատարաններին:

Բացառություն կարող ենք նկատել **Դանիայում**, որտեղ Բողոքարկման Մարմինը իրավասու է որոշում կայացնել վնասների հատուցման մասին: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ բողոքների քանակը Դանիայում շատ ցածր է և աշխատանքի ծավալը չի ազդում իրավունքների վերականգնման միջոցների արագության ապահովման պահանջի վրա: Վնասների հատուցման պայման է գործի էության վերաբերյալ որոշման առկայությունը, օրինակ, որոշում, որը բավարարում է կիրառելի պետական գնումների կանոնների խախտման դեմ բերված բողոքը: Վնասների հատուցման հայցերի վերաբերյալ որոշումները կայացվում են Դանիական օրենքի ընդհանուր սկզբունքների համաձայն: Կախված գործի հանգամանքներից՝ վնասները կարող են լինել մրցութային մասնակցելու ծախսերի կամ բաց թողնված օգուտի չափով:

- **Բողոքարկման մարմնում ընթացակարգը կողմերի միջև է (*inter partes*).** Ընդհանուր մրցակցային կանոնները պետք է պահպանվեն ցանկացած դեպքում: Բոլոր շահագրգիռ կողմերին տրվում է համապատասխան

հնարավորություն՝ ներկայացնելու փաստեր և ապացույցներ և յուրաքանչյուր կողմ պետք է ունենա մյուս կողմի ներկայացրած փաստարկներին և ապացույցներին պատասխանելու կամ դրանք վիճարկելու իրավունք: Բանավոր լսումներն ավելի լավ հնարավորություն են տալիս կողմերին՝ հասցեագրելու մյուս կողմի դիրքորոշումը, սակայն ընդունելի այլընտրանք է կողմերին թույլատրել բողոքարկման ընթացակարգի ընթացքում գրավոր հայտարարություններ ներկայացնել: Երկու կողմերն էլ պետք է ունենան բողոքարկման ընթացակարգի փաստաթղթերի հասանելիություն՝ բացառությամբ գաղտնի տեղեկությունների:

Որպես սկզբունք՝ **Հունգարական Պետական Գնումների Արբիտրաժային Մարմնում** լսումներն իրականացվում են բաց նիստերում, սակայն Խորհուրդը կարող է որոշել ընթացակարգերն իրականացնել փակ նիստում, եթե պետական, մասնագիտական կամ գործարար գաղտնիքի պատճառով անհրաժեշտ է պահպանել գաղտնիություն: Մի քանի բացառություններով հանդերձ, որոնց պատճառը հիմնականում գործարար գաղտնիքն է, գնումների փաստաթղթերի հասանելիությունը ամբողջովին երաշխավորվում է ներգրավված բոլոր մասնակիցների համար:

- **Մարմինը կիրառում է օրենքի գերակայության սկզբունքը:** Որոշումներ ընդունելիս մարմնից պահանջվում է կիրառել պետական պայմանագրերի շնորհումը կանոնակարգող դրույթները, որոնք սահմանված են ԵՄ Հրահանգներում և վերջիններիս փոխատեղման նպատակով ընդունված ազգային օրենսդրությունում: Այս պահանջը սերտորեն կապված է առաջին պահանջի հետ (մարմինը ստեղծված է օրենքով), քանի որ մարմնի կողմից այս պահանջը բավարարելը ցուցադրելու ուժեղ փաստարկ կարող է լինել այն հանգամանքը, որ մարմնի գործունեությունն ապահովող ընդհանուր ընթացակարգային կանոններն իրենք ևս սահմանված են օրենքով:
- **Մարմինն անկախ է:** Այս պահանջն ընդգրկում է շատ ոլորտներ՝ ինստիտուցիոնալ, ֆինանսական, սակայն հիմնական սկզբունքն այն է, որ բողոքարկման մարմինն իր պարտականություններն իրականացնում է անկախ, իր սեփական պատասխատվությամբ և որ դրա անդամները պարտավոր են պահպանել միայն օրենքը (մանրամասները ներկայացված են այս Համառոտագրի հաջորդ բաժնում):

Ոչ դատական բնույթ: Այն դեպքում, երբ բողոքարկման ընթացակարգի համար պատասխանատու մարմինները չունեն դատական բնույթ, պետական պայմանագրերի շնորհումը կարող է վերանայվել նման մարմինների կողմից առաջին ատյանում, սակայն ԵՄ Բողոքարկման Հրահանգները նախատեսում են որոշակի երաշխիքներ:

Նախ և առաջ, եթե բողոքարկման ընթացակարգերի համար պատասխանատու մարմինները չունեն դատական բնույթ, միշտ պետք է տրվի նրանց որոշումների գրավոր պատճառաբանումը:

Ավելին, նման դեպքերում դատական բնույթ չունեցող մարմինների կայացրած որոշումները պետք է ենթակա լինեն դատարանի կամ այլ մարմնի վերանայման, որը

հանդիսանում է դատարան կամ տրիբունալ ԵՏԽ Հոդված 177 իմաստով: Նման անկախ մարմինը պետք է մասնավորապես բավարարի 89/665/ԵՏԽ Հրահանգի Հոդված 2(8)-ի երկրորդ ենթապարագրաֆի պահանջները: (Ըստ էության, այն պետք է բավարարի վերը ներկայացված բոլոր վեց պահանջները):

Կիպրոսի պետական գնումների վերանայման և բողոքարկման համակարգը կարելի է բաժանել երեք տարրի. բողոք պետական պատվիրատուին, ոչ դատական վերանայում **Մրցույթների Վերանայման Մարմնի** կողմից և դատական վերանայում Կիպրոսի Գերագույն Դատարանի կողմից: Մրցույթների Վերանայման Մարմինն ունի լիազորություն՝ վերանայելու պետական պատվիրատուների ցանկացած որոշում, որն ընդունվել է օրենքի ենթադրյալ խախտմամբ մինչև պետական պայմանագրի կնքումը: Այսիպիսով, այն պետական գնումների բողոքարկման հատուկ մարմին է՝ անկախ կառավարությունից: Այնուամենայնիվ, այս մարմնի անդամները չունեն դատավորի կարգավիճակի հետ համեմատելի կարգավիճակ: Մրցույթների Վերանայման Մարմինն ունի հինգ անդամ, ներառյալ՝ նախագահը: Ցանկացած անձ, որը վնաս է կրել Մրցույթների Վերանայման Մարմնի, կամ պայմանագրի կնքումից առաջ կամ հետո պետական պատվիրատուի ընդունած որոշման պատճառով կարող է բողոքարկել նման որոշումը Կիպրոսի Գերագույն Դատարան: Գերագույն դատարանի անդամները և դրա նախագահը դատավորներ են և նրանց կարգավիճակը կարգավորվում է Սահմանադրությամբ: Դատարանը բավարարում է ԵՏԽ 177-րդ Հոդվածով սահմանված դատարանի համար նախատեսված պահանջները:

Պետական Գնումների Համաձայնագրի (ՊԳՀ) կանոնները: Պետական գնումների վերանայման և բողոքարկման ընթացակարգերի հիմնարար պահանջները սահմանվել են 1994 թվականի Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) Պետական Գնումների Համաձայնագրում (նաև՝ ՄԱԿ-ի Միջազգային Առևտրային Իրավունքի Հանձնաժողովի Մոդելային Օրենքում - UNCITRAL, փոփոխված՝ 2011 թվականին): Այս հիմնական գործառնության ցուցանիշները սահմանում են այն հիմքը, որի վրա կառավարությունները կարող են կառուցել բողոքարկման մարմիններ և վերանայման ընթացակարգեր՝ բավարարելով հանրային ծախսերի արդյունավետ իրականացման մեջ հանրության ունեցած հետաքրքրությունը, ինչպես նաև շնորհման ընթացակարգերին մասնակցող մասնավոր շահառուների հետաքրքրությունը:

Օգտակար է նշել, որ բողոքարկման մարմինների վերաբերյալ ԱՀԿ Պետական Գնումների Համաձայնագիրը պարունակում է ԵՄ օրենսդրությամբ սահմանված նմանատիպ սկզբունքներ: Ճիշտ է՝ Եվրոպական Միության Արդարադատության Դատարանի (ԵՄԱԴ) նախադեպային իրավունքն առաջարկում է հատուկ դեպքերում կիրառելի ընդհանուր սկզբունքների մեկնաբանման շատ մանրամասներ, սակայն արժե ընդգծել ԵՄ և ԱՀԿ նմանությունները բողոքարկման մարմինների հարցի վերաբերյալ՝ որպես լավագույն փորձի օրինակ՝ ճանաչված նման միջազգային մակարդակում:

ԱՀԿ Համաձայնագրի համաձայն. *“Բողոքը պետք է քննվի դատարանի կամ անկողմնակալ և անկախ վերանայման մարմնի կողմից, որը չունի շահ գնման արդյունքից և որի անդամներն ապահովված են արտաքին ազդեցությունից նշանակման ժամկետի ընթացքում: Դատարան չհանդիսացող բողոքարկման*

մարմինը պետք է կամ լինի ենթակա դատական վերանայման, կամ ունենա ընթացակարգեր, որոնք կապահովեն հետևյալը..

(ա) Մասնակիցները կարող են ցուցումներ տալ մինչև կարծիքի տրամադրումը կամ որոշման ընդունումը;

(բ) Մասնակիցները կարող են ներկայացվել և ուղեկցվել;

(գ) Մասնակիցները պետք է ունենան հասանելիություն բոլոր ընթացակարգերին;

(դ) Ընթացակարգերը կարող են լինել հանրային;

(ե) Կարծիքները կամ որոշումները տրվում են գրավոր՝ կարծիքի կամ որոշման պատճառը նկարագրող փաստաթղթի հետ միասին;

(զ) Կարող են ներկայացվել վկաներ;

(է) Փաստաթղթերը ներկայացվում են բողոքարկման մարմին”:

Վարչական բողոքներ պատվիրատուներին

Որոշ ԵՄ Անդամ երկրների օրենսդրությունը նախատեսում է հետևյալ պարտավորությունը (կամ միայն հնարավորությունը).

- Նախնական վարչական բողոք ներկայացնել պատվիրատուին, որն իրականացրել է պետական գնումների օրենսդրության ենթադրյալ խախտում; կամ
- Տեղեկացնել պատվիրատուին բողոք ներկայացնելու մտադրության մասին:

ԵՄ Բողոքարկման Հրահանգների համաձայն՝ վերոնշյալ երկու պարտավորությունները/հնարավորությունները կամավոր են:

Բողոքն անմիջապես պատվիրատուին ներկայացնելու տարբերակը կարող է ունենալ որոշակի առավելություններ, հատկապես այն դեպքերում, երբ վեճի պատճառը իրական և ակնհայտ սխալն է, ոչ թե պետական գնումների օրենսդրության միտումնավոր խախտումը: Հայտատուն կարող է խուսափել պատվիրատուի հետ ընդհարումից, քանի ոչ վերջինս կունենա սխալն ուղղելու հնարավորություն: Այս լուծումը կարող է լինել խախտումն ուղղելու ամենաարագ եղանակը և այն հնարավորություն է տալիս խուսափել բողոքարկման ընթացակարգերի ծախսերից:

Չնայած նման կանոնը կարող է գործնականում օգտակար լինել, այնուամենայնիվ **ԵՄ Բողոքարկման Հրահանգների կողմից** պետական պատվիրատուին նախնական բողոք ներկայացնելը **չի համարվում բողոքարկման ընթացակարգի առաջին փուլ:**

Թերությունն այն է, որ բողոքի վերաբերյալ պատվիրատուի որոշմանն սպասելը ժամանակատար է և կարող է երկարաձգել բողոքարկման ամբողջ ընթացակարգը: Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ նախնական ծանուցումն ուղարկվել է պատվիրատուին բողոքարկման մարմին բողոք ներկայացնելուն զուգահեռ, պատվիրատուի որոշմանը սպասելու պարտավորություն չկա: Մա է պատճառը, որ որոշ Անդամ երկրներ պահանջում են դատական կամ քվազի-դատական

վերանայում պահանջող տնտեսվարող սուբյեկտներից իրենց բողոքի կամ հայցի պատճեն ուղարկել միայն համապատասխան պետական պատվիրատուին, որպեսզի վերջինս ունենա մինչև բողոքարկման ընթացակարգն սկսելը խախտումն ուղղելու հնարավորություն: (Մանրամասների համար, տես Պետական Գնումների Վերանայման և Բողոքարկման Համակարգերը Եվրոպական Միությունում (SIGMA փաստաթուղթ No.41, 2007):

Բողոքարկման մարմնի կարգավիճակը և անկախությունը

Որպես Բողոքարկման Հրահանգների պահանջ, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի առարկա, բողոքարկման մարմնի անկախությունը կարելի է համարել պետական գնումների որոշումների դեմ բողոքարկման ընթացակարգերի վստահելի արդյունքների ապահովման հիմնաքար:

Անկախության հետ կապված հարցերը պետք է հասցեագրվեն երկու մակարդակում.

- Բողոքարկման մարմնի՝ որպես ինստիտուտի անկախությունը;
- Բողոքարկման մարմնի անդամների անկախությունը:

Ինչ վերաբերում է **ինստիտուտին**, մասնագիտացված բողոքարկման մարմնի անկախ իրավական կարգավիճակ ունենալու փաստը հաստատելու համար, այն պետք է լինի (i) անկախ պետական գնման ընթացակարգերի կողմերից՝ պատվիրատուներից և տնտեսվարող սուբյեկտներից; և (ii) ունենա գործառույթային անկախություն կառավարությունից:

Նույնիսկ, եթե բողոքարկման մարմինը տեխնիկապես անկախ է պատվիրատուներից, այն դեռևս կազմում է պետական ապարատի մաս, հետևաբար միշտ կլինի որոշակի մտահոգություն, որ այն ոչ ամբողջությամբ է անկախ կառավարությունից: Գործողությունների նման անկախությունը երաշխավորելու անկարողությունը կհանգեցնի վստահության պակասի, ինչը լուրջ հետևանքներ կունենա ամբողջ պետական համակարգի և լավ գործող համակարգի կողմից առաջարկվող զգալի օգուտների համար: Եթե բողոքարկման մարմինն անկարող է պարտադրել գնումների օրենսդրության կիրառումը խախտում իրականացնողին կամ նույնիսկ, եթե այն ընկալվում է որպես նման կերպ վարվելուն ոչ ընդունակ, տուժած հայտատուները չեն տեսնի բողոք ներկայացնելու օգուտը և կանոնակարգերի խախտումները կմնան չուղղված:

Այս պատճառներով բողոքարկման մարմնի կարգավիճակը կապված է նաև կառավարության մեջ դրա աստիճանակարգի հետ: Քանի դեռ բողոքարկման մարմինը գտնվում է նախարարի վերահսկողության ներքո դժվար կլինի ցուցադրել այդ մարմնի և նրա անդամների իրական անկախությունը, որոնք պետք է պաշտպանված լինեն անտեղի քաղաքական միջամտությունից: Նույնիսկ, եթե նախարարության հետ կապերը սահմանափակվում են միայն վարչական հարցերով, նման կապի անխուսափելի հետևանքն այն փաստն է, որ հայտատուները կարող են ընկալել բողոքարկման մարմինը՝ որպես դեռևս աստիճանակարգի մաս կազմող և որ դրա անկախության և չեզոքության վրա կարող են ազդել ցանկացած ժամանակ: Վերանայման գործառույթը ենթադրում է ինստիտուտի լիազորությունը՝ ընդունել քվազի-դատական որոշումներ (ներառյալ՝ փոխհատուցման շնորհումը)

կառավարության դեմ: Հարց է ծագում, թե արդյոք նախարարությունը կունենա նման որոշումներ կայացնելու լիազորություն և/կամ վստահություն:

Հետևաբար, թվում է, թե լավագույն լուծումը բողոքարկման մարմինը նախարարությունից դուրս տեղակայելն է, ցանկալի է՝ որպես առանձին ինստիտուտ և ցանկացած դեպքում, եթե նույնիսկ անհնար է ապահովել “բացարձակ” անկախություն, առանց կառավարության ապարատում որևէ աստիճանակարգային տեղակայման, հիմնականում՝ որպես դրա անկախության և չեզոքության պահպանման միջոց:²

Ընդհանուր առմամբ ժամանակակից պետական վարչարարական համակարգերը պահանջում են վարչակազմում իրավասությունների տարանջատում՝ հաշվետվողականության, պատշաճ ընթացակարգերի և անկաշառության ապահովման նպատակով: Այսպիսով, նրանք, ովքեր պատասխանատու են քաղաքականության որոշման, մեկնաբանման, կիրարկման և խորհրդատվության համար չեն կարող լինել պատասխանատու հարկադրման համար (ներառյալ՝ վերանայման և բողոքարկման գործառնությունը): Շատ քիչ բացառություններով՝ մասնագիտացված բողոքարկման մարմին ստեղծած բոլոր ԵՄ Անդամ երկրներում այս ինստիտուտներն ունեն հստակ և բացառիկ պարտավորություն՝ տրամադրելու իրավունքի պաշտպանության միջոցներ: Շատ կարևոր է ապահովել պետական գնումների համակարգում լիազորությունների և իրավազորությունների տարանջատումը՝ շահերի բախումից խուսափելու և համակարգի նկատմամբ վստահություն առաջացնելու նպատակով:

Պետական գնումների նոր համակարգեր ստեղծող երկրներից շատերում առաջին փուլում կանոնակարգող մարմինը (Պետական Գնումների Գրասենյակը/Գործակալությունը/Մարմինը – ՊԳԳ/ՊԳՄ) օժտված էր պետական գնումների որոշումները վերանայելու լիազորությամբ:

Եթե կանոնակարգող մարմինն օրենսդրության համաձայն հանձնարարված է խորհուրդներ տալ պատվիրատուներին, այն կարող է երբեմն առերեսվել իր սեփական խորհրդին: Իրավիճակն ավելի բարդ կլինի, եթե մարմինը ներգրավված լինի գնումների ողջ գործընթացի կամ դրա մի մասի նախնական (*ex ante*) հսկողության մեջ: Հետևանքը կլինի այն, որ կանոնակարգող մարմինը հնարավորություն կունենա քննել բողոքներն այն դեպքում, երբ հենց ՊԳԳ/ՊԳՄ ինքն արդեն ընդունել է (կամ նույնիսկ պարտադրել է) ենթադրյալ սխալ որոշումը:

Մինևույն անհամապատասխանությունը կարող ենք նկատել այն դեպքում, երբ բողոքարկման մարմինն անմիջականորեն ներգրավված է գնումների գործարքներում, օրինակ, երբ այն, ի թիվս այլ պարտականությունների, պետք է գործի նաև որպես կենտրոնացված գնումների մարմին:

Նման դեպքերում այդ ինստիտուտը դառնում է *կարգավորող, կարգավորվող, հսկող* և *դատավոր* և շահերի հնարավոր բախումն ու չարաշահումները դառնում են գրեթե

² Տե՛ս ԵՄՄԴ գործ C-53/03, Synetairismos Farmakopoiou Aitolias & Akarnanias (Syfait) and Others v GlaxoSmithKline, մասնավորապես, պարագրաֆ 30 և 31

անխուսափելի: Այս մեխանիզմները չեն համապատասխանում բողոքարկման մարմինների անկախությանը վերաբերող պահանջին, և շատ երկրներ փոխել են ինստիտուցիոնալ շրջանակը՝ պետական գնումների համակարգի բարեփոխումների շարունակական գործընթացի ընթացքում:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի իստիտուտի ֆինանսավորմանը: Մասնագիտացված մարմինը պետք է լինի ֆինանսապես անկախ՝ իր սեփական բյուջեով: Համապատասխան ֆինանսավորումն անհրաժեշտ է՝ երաշխավորելու դրա անկախությունը և ապահովելու պատշաճ կադրային համալրվածությունը (ներառյալ՝ վարչական օժանդակ աշխատակազմը) և այլ ռեսուրսները՝ պահանջվող որակի ծառայություններ մատուցելու նպատակով: Լավագույն լուծումը ֆինանսավորման ապահովումն է՝ իրավական/կարգավորիչ շրջանակի միջոցով: Եթե ֆինանսավորումը անբավարար է կամ նույնիսկ այն դեպքում, երբ ֆինանսավորումը բավարար է, բայց ենթակա է վարչական որոշման և կարող է հեշտորեն փոխվել, բողոքարկման մարմինը կարող է չունենալ իրական անկախություն՝ իր պարտականությունները կատարելու համար:

Բողոքարկման մարմինն պետք է տրամադրել բավարար ենթակառուցվածքներ (օրինակ՝ գրասենյակային տարածք, SS սարքեր, տվյալների բազա և վերապատրաստումներ)՝ իր աշխատանքները հաջողությամբ իրականացնելու համար:

Ինչ վերաբերում է մասնագիտացված բողոքարկման մարմնի **անդամներին**, ապա նրանց անկախությունը բողոքարկման մարմնի՝ որպես ինստիտուտի անկախությունը ցուցադրելու կենսական պահանջ է:

Ամենակարևոր ոլորտներից է նշանակումը և լիազորությունների դադարեցումը կանոնակարգող կանոնների խումբը: Մինչ մանդատի ավարտը անդամի նշանակման չեղարկման հնարավորությունը պետք է սահմանափակվի մի քանի հատուկ հանգամանքներով, որոնք պետք է հստակ սահմանված լինեն օրենսդրության մեջ: Բողոքարկման մարմնի անդամներին պաշտոնապես նշանակող և լիազորությունները դադարեցնող (միայն օրենքով սահմանված հատուկ հանգամանքների դեպքում) անձը/մարմինը պետք է լինի նույնը: Ինչքան անկախ է բողոքարկման մարմնի անդամներին նշանակելու/լիազորությունները դադարեցնելու իրավազորությամբ օժտված անձը/մարմինը, այնքան ավելի ապահովված կլինի նրանց պաշտոնը և հետևաբար, նրանց անկախությունը:

Ավստրիա

Վարչական դատավորների անկախությունը (մշտական անդամները - *Senatsvorsitzende*) երաշխավորվում է սահմանադրական իրավունքով: Մշտական անդամները նշանակվում են **Ավստրայի Դաշնային Նախագահի** կողմից; նախագահը և փոխնախագահը նշանակվում են ցմահ:

Նշանակման համար գոյություն ունեն մասնագիտական որակավորման պահանջներ (պետական գնումների հատուկ գիտելիքներ և իրավաբանական փորձ): Նախագահը, փոխնախագահը և մշտական անդամները պետք է լինեն որակավորված իրավաբաններ՝ իրավաբանական գործունեության կամ պետական գնումների ոլորտում առնվազն հինգ տարվա մասնագիտական փորձով:

Մշտական

Ազգային Բողոքարկման Հանձնաժողովը (ԱԲՀ) մասնագիտացված, անկախ և ինքնավար ազգային մարմին է, որը վերանայում է պետական գնումների շնորհման ընթացակարգերը, ինչպես սահմանված է Պետական Գնումների Ընթացակարգերի Վերանայման Ակտում: ԱԲՀ-ի նախագահը և դրա չորս անդամները նշանակվում են **Ազգային Ժողովի** կողմից՝ Հանձնաժողովի կողմից Մանդատի և Ընտրությունների առաջարկի հիման վրա, հինգ տարի ժամկետով, վերընտրվելու հնարավորությամբ:

Նախագահը և անդամներից երկուսը պետք է ունենան բարձրագույն իրավաբանական կրթություն և մասնագիտական աստիճան, որը թույլատրում է փաստաբանության ընդունելություն: Մյուս երկու անդամները պետք է ունենան տնտեսագիտական կամ ինժեներական բարձրագույն կրթություն:

Ցանկացած դեպքում բողոքարկման մարմնի անդամները պետք է օրենքով պաշտպանված լինեն ցանկացած միջամտությունից կամ նույնիսկ ճնշումից, որը կարող է գործադրվել գործադիր և/կամ քաղաքական մակարդակում: Բողոքարկման մարմնի անդամները պետք է իրականացնեն իրենց գործառույթները բացարձակ անկախ և այլ անձանց անունից իրենց պարտականությունների կատարման նպատակով տրված ցանկացած ցուցում պետք է արգելված լինի օրենքով:

Բողոքարկման մարմնի անդամների անկախությունը նրանց անաչառության ապահովման նախապայման է, ինչը բոլոր դատական, քվադր-դատական և վարչական մարմինների հիմնարար սկզբունքն է: Այնուամենայնիվ, այս անաչառության վրա կարող է ազդեցություն ունենալ շահերի բախումը, որից չի կարելի խուսափել և որը կարող է ծագել բնականորեն՝ առանց ինչ-որ մեկի մեղավորության: Այդ պատճառով օրենքը կամ ամենաքիչը կանոնակարգերը պետք է սահմանեն շահերի բախման նույնականացման և հայտնաբերման կանոններ և նախատեսեն գործողություններ, որոնք կարող են ձեռնարկվել դրանցից խուսափելու կամ դրանք մեղմացնելու նպատակով: Բողոքարկման մարմնի անդամները պետք է բացառվեն բողոքարկման ընթացակարգերին մասնակցությունից, եթե նրանք որոշման մեջ ունեն մասնավոր շահ: Օրինակ՝ դա կարող է առնչվել անձամբ անդամին կամ վերջինս կարող է լինել վեճի կողմերից մեկի բարեկամը: Այդ դեպքում նպատակահարմար է, որ անդամը պահպանի իր պաշտոնը, սակայն ձեռնպահ մնա իրեն վերաբերող ցանկացած որոշման ընդունման գործընթացից: Այս գործողությունը կարող է իրականացվել քվեարկման գործընթացից ձեռնպահ մնալու, համապատասխան առաջարկի քննարկմանը չմասնակցելու և գործին առնչվող ցանկացած փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ ստանալուց հրաժարվելու միջոցով:

Որպես ընդհանուր կանոն՝ բողոքարկման մարմնի անդամներին արգելվում է.

- Իրականացնել առևտրային գործունեություն, ներառյալ՝ խորհրդատվական ծառայությունները, ուղղակի կամ միջնորդների միջոցով;
- Լինել տնտեսական շահ ունեցող խմբի անդամ;

- Լինել քաղաքական կուսակցության անդամ և մասնակցել կամ իրականացնել քաղաքական գործունեություն;
- Իրականացնել ցանկացած հանրային կամ մասնավոր գործառույթ՝ բացառությամբ կրթական, գիտական հետազոտական և/կամ գրական և գեղարվեստական ստեղծագործությունների:

Ֆինանսական ապահովությունը մեկ այլ ոլորտ է, որին պետք է բողոքարկման մարմնի անդամների անկախությունը քննարկելիս հատուկ ուշադրություն դարձնել: Նման պաշտոններ գրավող մարդիկ կարող են ցանկացած ժամանակ ենթարկվել ֆինանսական և այլ տեսակի գայթակղությունների և նրանք պետք է ունակ լինեն դիմակայել նման հրապուրանքներին: Այն երկրներում, որտեղ հանրային հատվածի աշխատավարձերը ընդհանուր առմամբ ցածր են, խորհուրդ է տրվում հատուկ աշխատավարձային սխեմաների/սանդղակների կիրառման իրավական լուծումներ գտնել՝ բողոքարկման մարմնի անդամների ողջամիտ ֆինանսական կարգավիճակն ապահովելու նպատակով:

Ռումինիա

Բողոքների քննման Ազգային Խորհրդի անդամները գնումների օրենսդրության ոլորտում փորձ և հատուկ կարգավիճակ ունեցող (անկախություն, ընտրության ընթացակարգեր և նշանակում, համակցություն և արգելքներ, աշխատավարձեր) քաղաքացիական ծառայողներ են: Խորհրդի անդամներն ընտրվում են մրցույթով՝ հիմնվելով մասնագիտական ունակությունների և հեղինակության վրա, և պաշտոնապես նշանակվում են **վարչապետի** կողմից: Նրանք պետք է ունենան բարձրագույն կրթություն և առնվազն երկու տարվա պետական գնումների մասնագիտական փորձ: Խորհրդի անդամների առնվազն կեսը պետք է լինեն որակավորված իրավաբաններ:

Ինչ վերաբերում է վարձատրության մակարդակին, նրանք հավասարեցված են կառավարության գլխավոր քարտուղարի գործառույթին:

Այլ կարևոր գործնական խնդիրներ

Բավարար չէ ուղղակի “թղթի” վրա նկարագրել ստեղծվող բողոքարկման մարմնի տեսակը և կիրառելի ընդհանուր կանոնները: Մի շարք լրացուցիչ մանրամասներ պետք է հստակ հասցեագրվեն, քանի որ դրանք անմիջանակորեն սահմանված չեն ԵՄ Բողոքարկման Հրահանգներում, սակայն ունեն հնարավոր ազդեցություն ոչ խտրականության, արդյունավետության և թափանցիկության ընդհանուր սկզբունքների վրա:

Ոչ խտրականության սկզբունքի պահպանման հետ կապված՝ ընդհանուր ընկալումն այն է, որ բոլոր տնտեսվարող սուբյեկտները՝ առանց որևէ խտրականության, հատկապես՝ ազգության հիմքով, պետք է ունենան իրավունքների պաշտպանության միջոցների հասանելիություն:

Ավելին, համարժեքության սկզբունքը պահանջում է, որ եթե առկա են ԵՄ կանոնների հարկադրման հատուկ միջոցներ, նման միջոցների կիրառման պայմանները պետք է լինեն “ոչ պակաս բարենպաստ”, քան ազգային կանոնները հարկադրելու համար կիրառվող նմանատիպ միջոցները: Բողոքարկման մարմնի

հասանելիությանը, վճարման ենթակա տուրքերին, ժամկետներին և ներկայացվող ապացույցներին վերաբերող կանոնները չպետք է օրենքով սահմանված իրավունքների իրագործումը դարձնեն **անհնար կամ շատ դժվար**:³

Օրինակ՝ վերանայման և բողոքարկման հետ կապված ծախսերը չպետք է լինեն էական, քանի որ բարձր վճարները կարող են համարվել հայտատուների կողմից բողոքների ներկայացմանը խանգարող հանգամանք: Կեղծ բողոքների միջոցով չարաշահումների ռիսկի նվազեցման նպատակով շատ ԵՄ Անդամ երկրներ կիրառում են բողոքի ներկայացման վճար: Այնուամենայնիվ, առաջին ատյանի բողոքարկման մարմիններին վճարվող տուրքերը ցանկացած դեպքում ավելի քիչ են, քան այդ մարմինների որոշումների բողոքարկման համար վճարվողները կամ վերջին ատյանի մարմինների կողմից վերանայման համար վճարվող գումարները: Վճարները պետք է լինեն համամասն՝ նպատակ ունենալով նվազեցնել կեղծ կամ չհիմնավորված բողոքների ներկայացումը, մինևույն ժամանակ չգործելով որպես արդարացված բողոքների ներկայացումից ետ պահող հանգամանք և չսահմանափակելով փոքր և միջին ձեռնարկությունների հասանելիությունը:

Բնական է օրենքում նախատեսել ամենակարևոր տարրերը, որոնք պետք է ներառվեն կամ կցվեն բողոքին: Այնուամենայնիվ, ապացույցներին վերաբերող պահանջները չպետք է լինեն չափազանցված կամ անհնար՝ բավարարման համար: Երբեմն տնտեսվարող սուբյեկտները չեն տրամադրում որոշակի փաստաթղթեր/տեղեկություններ կամ ճշգրիտ չեն պահպանում որոշակի փաստաթղթերի համար պահանջվող ձևաչափը: Նման դեպքերում խորհուրդ է տրվում նման սուբյեկտներին տալ փաստաթղթերը լրացնելու հնարավորություն:

Ինչ վերաբերում է **արդյունավետության սկզբունքի պահպանմանը**, ապա բողոքարկման մարմինները պետք է ունենան բավարար իրավագործություն (պաշտոնական լիազորություն)՝ ապահովելու պետական գնումների կանոնների պահպանումը, և վերանայումը պետք է լինի հնարավորինս արագ: **Գործուն բողոքարկման մարմինը** հանդիսանում է նախապայման՝ այս նպատակին հասնելու համար: Մարմնի կառուցվածքը, ֆինանսավորումը, կադրային հագեցվածությունը և առաջադրանքներն իրականացնելու լիազորությունները պետք է բավարար և համապատասխան լինեն իր պարտականություններին:

Ընթացակարգային պահանջները և վերանայման գործընթացի կանոնները հստակ և մանրամասն հասցեագրող նորմեր պետք է սահմանվեն օրենքում կամ առնվազն կիրարկող կանոնակարգերի մակարդակում: Այլ հարցեր, ինչպես օրինակ բողոքարկման մարմնի անդամների միջև գործերի բաշխման եղանակն է (պատահական ընտրությունը հավանաբար ամենալավ տարբերակն է, եթե կոռուպցիան լուրջ վտանգ է), շահերի բախումից խուսափելու եղանակները և անդամ դառնալու համար պահանջվող որակավորումները (կրթություն, փորձ, գիտելիք և այլ հատուկ ունակություններ) ևս պետք է հստակ կանոնակարգվեն: Անհրաժեշտ է իրավական հստակություն մտցնել, թե արդյոք ամբողջ մարմինը, թե պալատները պետք է որոշում կայացնեն: Եթե նախապատվությունը տրվում է երկրորդ տարբերակին, պետք է նշվի յուրաքանչյուր պալատի անդամների թիվը:

³ *Stu ԵՄԱԴ գործ C-327/00, Santex SpA v Unità Socio Sanitaria Locale n. 42 di Pavia.*

Անհրաժեշտ է ընդունել ընթացակարգային կանոններ՝ ապահովելու ընթացակարգերի արագությունը, օրինակ՝ սահմանելով բողոքարկման մարմնի կողմից որոշման ընդունման առավելագույն ժամկետներ:

Վերոնշյալ բոլոր կանոնները ոչ միայն նպաստում են գործուն բողոքարկման մարմնի ստեղծմանը, այլ նաև բխում են բոլոր շահագրգիռ կողմերի (պատվիրատուներ և տնտեսվարող սուբյեկտներ) շահերից՝ գոյություն ունեցող կանոնների հստակ սահմանման և բողոքարկման ընթացակարգից սպասելիքների առումով:

Բողոքարկման մարմնի կարողությունները պետք է լինեն համապատասխան՝ սպասվող քանակի բողոքների հետ գործ ունենալու համար, և ժամանակի ընթացքում դրանք պետք է ուժեղացվեն՝ ամբողջ համակարգի ընդհանուր զարգացմանը համահունչ: Մասնավորապես, մարդկային ռեսուրսների առումով վարչական կարողությունը կարտացոլվի աշխատակազմի չափի, աշխատակազմի կազմի և նրանց կրթության միջոցով:

Եթե ինստիտուտները շարունակաբար ունեն աշխատակիցների պակաս, նրանց մարդկային ռեսուրսների կարողությունները չեն կարող բավարար լինել պարտավորություններն արդյունավետորեն իրականացնելու համար: Բողոքարկման մարմնի անդամների քանակը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք կարևոր գործոններ, ինչպիսիք են օրինակ.

- Բողոքարկման մարմնին առաջադրված խնդիրների շրջանակը, ներառյալ՝ ոչ միայն շնորհիված իրավագործությունները, այլ նաև բողոքարկման համակարգի գործողության ոլորտը⁴;
- Երկրի պատվիրատուների քանակը;
- Բողոքարկման մշակույթը, ներառյալ՝ տեղական մտածելակերպը և պատվիրատուների որոշումների դեմ բողոք ներկայացնելու՝ տնտեսվարող սուբյեկտների հակվածությունը;
- Վեճի վերաբերյալ որոշում կայացնելու համար օրենսդրությամբ տրված ժամկետները;
- Օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր գործը քննող բողոքարկման մարմնի անդամների քանակը;
- Օժանդակությունը, որը կարող է առաջարկել մարմնի տեխնիկական և վարչական աշխատակազմը անդամներին;

Բողոքարկման մարմնում աշխատող աշխատակազմի կրթությունը ևս կարևոր է, քանի որ նրանք պետք է ոչ միայն ունենան պետական գնումների վերաբերյալ լավ գիտելիքներ, այլ նաև պետք է ունակ լինեն գնահատելու ապացույցները և կազմելու

⁴ ԵՄ Անդամ երկրների մեծագույն խմբում բողոքարկման համակարգը կիրառվում է Պետական գնումների 2004/17/ԵՀ և 2004/18ԵՀ Հրահանգներով նախատեսված շեմից բարձր, ինչպես նաև ցածր պայմանագրերի համար (մանրամասների համար տե՛ս Պետական Գնումների Վերանայման և Բողոքարկման Համակարգերը Եվրոպական Միությունում (SIGMA փաստաթուղթ No. 41, 2007):

հիմնավորված որոշումներ: Գնումների բողոքարկման համակարգի բարեփոխումների ենթատեքստում բողոքարկման գործառույթներն իրականացնելու համար անձանց նշանակումն անհրաժեշտաբար չի նշանակում, որ նրանք, միայն այդ փաստի վրա հիմնվելով, ունեն անհաժեշտ կարողություններ այդ գործառույթն իրականացնելու համար: (Նոր) բողոքարկման մարմնի ստեղծումը սովորաբար պահանջում է կարողությունների զարգացման ջանքեր, ինչը կներառի խորացված վերապատրաստումներ, մասնավորապես՝ մարմնի գործունեության սկզբում, ինչպես նաև հետագա տարիների ընթացքում՝ շարունակական կրթական ծրագրերին մասնակցելու միջոցով:

Արդիական հարց է, թե արդյոք բողոքարկման մարմինը պետք է հաշվի առնի միայն բողոքի բովանդակությունը և սահմանափակի վերանայումը բացառապես տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված բողոքով, թե պետք է նաև ավելի լայն քննություն իրականացնի՝ հաշվի առնելով գնումների ողջ փաստաթղթերը՝ որոշելու, թե արդյոք տեղի է ունեցել օրենսդրության այլ կարևոր խախտում:

Գոյություն չունեն **ԵՄ պահանջներ** բողոքարկման մարմնի կողմից *ի պաշտոնե* հետաքննություն իրականացնելու համար: Որոշ երկրներ ունեն նման դրույթներ իրենց օրենսդրության մեջ, սակայն նրանցից շատերը մտադիր են չեղարկել այս պահանջը, քանի որ նման դրույթների արդյունքը գործնականում ոչ միշտ է դրական եղել: Շատ դեպքերում դիմումատուները փոխանցում էին հետաքննության բեռը բողոքարկող մարմնին, ինչը հանգեցնում էր երկարատև և ծախսատար ընթացակարգերի:

Մարմնի անդամները կարող են ստանալ կարևոր արտաքին օժանդակություն, եթե նրանք ունենան գործի տեխնիկական մասերը քննելու համար արտաքին փորձառությունն օգտագործելու հնարավորություն: Որպես ընդհանուր կանոն՝ փորձագետները պետք է ունենան որոշակի ոլորտում մասնագիտական գիտելիքներ և նրանց առաջադրանքը պետք է լինի բողոքարկման մարմնին հատուկ հարցերի հետ կապված (հիմնականում տեխնիկական կամ ֆինանսական) անաչառ կերպով օժանդակելը: Ե՛վ բողոքատուին, և՛ պատվիրատուին պետք է թույլատրված լինի ներկայացնել փորձագետի կարծիք (կարծիքներ): Ի լրումն՝ բողոքարկման մարմինը կարող է նշանակել իր սեփական փորձագետին, որը պետք է լինի անաչառ և կողմերից և ցանկացած այլ ազդեցությունից անկախ: Եթե տրված խորհուրդը թվում է ոչ ողջամիտ, բողոքարկման մարմինը կարող է մերժել այն, նշանակել այլ փորձագետ կամ ընդունել կողմի փորձագետի եզրակացությունը, եթե կիրառելի է:

Հիմնականում, բողոքարկման մարմնի անդամների համար պարտադիր չէ ընդունել փորձագետների կարծիքը, սակայն այս կարծիքը կարող է զգալի կշիռ ունենալ որոշում կայացնելիս և չի կարող կամայականորեն անտեսվել:

Ինչ վերաբերում է **իրավական որոշակիության և թափանցիկության սկզբունքի պահպանմանը**, ապա բողոքարկման մարմնի կարևորագույն նպատակներից մեկը հետևողական որոշումների երաշխավորումն է, որոնք պետք է հասանելի լինեն հանրությանը:

Առաջին պայմանը հստակ և թափանցիկ ընթացակարգերի առկայությունն է՝ օրենքի հետևողական կիրառումն ապահովելու նպատակով: Երկրորդ, յուրաքանչյուր կողմ պետք է իրավունք ունենա տեղեկացված լինել ընթացակարգերի զարգացումներից, որպեսզի կարողանա պատշաճ կերպով պատրաստել իր փաստարկները: Ոչ պակաս

կարևոր է այն, որ կողմերը պետք է իրավունք ունենան տեղեկանալ բողոքարկման մարմնի որոշման պատճառների մասին, ներառյալ՝ այն փաստարկները, որոնցով պայմանավորված են ապացույցների գնահատումը և որոշմանը վերաբերող իրավական հարցերի նկատառումները:

Բողոքարկման մարմնի որոշումների հրապարակումն իր համացանցային էջում արդյունավետ գործիք է՝ օժանդակելու իր անդամներին՝ նմանատիպ գործերով նախկին որոշումների հետ մարմնի հետևողականությունն ապահովելու և օրենսդրության մեկնաբանման ժամանակ հակասական որոշումներից խուսափելու նպատակով: Ավելին, այն կարող է ծառայել որպես համակարգի այլ հիմնական շահագրգիռ կողմերի հետ բողոքարկման մարմնի փորձառությունը կիսելու արժեքավոր գործիք: Պատվիրատուները և տնտեսվարող սուբյեկտները օգուտ կքաղեն մարմնի կողմից զանազան բողոքներին տրված լուծումների և գնումների համակարգին առնչվող զանազան խնդիրների մեկնաբանության այս գերազանց եղանակից:

Համապատասխան տվյալների հեշտ հասանելիությունն անհրաժեշտ է՝ “կիսվելու” մեխանիզմի արդյունավետությունը բաձրացնելու և որոշակի չափորոշիչների բավարարող գործերն արագ փնտրելու համար: Այդ պատճառով որոշման հրապարակումը չմշակված ձևով (օրինակ՝ PDF փաստաթուղթը) բավարար չէ՝ երաշխավորելու օրենքի հետևողական մեկնաբանությունը և կիրառումը: Պետական գնումների մասնագետների համար դժվար կլինի արագ գտնել առանձին որոշումների մեջ արտացոլված իրավական խնդիրների լուծումները՝ առանց դրանք բոլորն ընթերցելու:

Լավագույն լուծումը կլինի **որոշումների բազայի** մշակումը, ներառյալ՝ առանձին իրավական խնդիրների համար **փնտրման հնարավորությունները**, որպես մասնագետներին իրենց ամենօրյա աշխատանքում օժանդակող միջոց և որպես բողոքարկման մարմնի անդամների կողմից որոշումների ընդունման հետևողականությունն ապահովող գործիք: Ի լրումն՝ բողոքարկման մարմինը պետք է հրապարակի գնման ընթացակարգերի ընթացքում ամենահաճախ հանդիպած իրավական խնդիրների վերլուծություն՝ տալով ցուցումներ, թե ինչպես վարվել դրանց հետ գործնականում (օրինակ՝ որակավորման չափորոշիչները, շնորհման չափորոշիչները, տեխնիկական մասնագրերի օգտագործումը, խիստ ցածր արժեքով հայտերը):

Հետագա ընթերցանություն:

- [Պետական Գնումների Վերանայման և Բողոքարկման Համակարգերը Եվրոպական Միությունում](#) (SIGMA փաստաթուղթ No. 41, 2007);
- [Իրավունքների Պաշտպանության Միջոցները](#) (SIGMA Պետական Գնումների ամսառոտագիր 12, 2011).